Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.9909
S-54

6 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԿԻՑ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՄԱՆ ԲՅՈՒՐՈ

Ձեռագրի իրավունքով

ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՈՒՐՍ II 1931 ԱՌԱՋԱԴՐ. № 4 (12)

ՊՐՈՖ. Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX—XX Դ. Դ.

891.99.09
Ա-54

ՅԵՐԵՎԱՆ 1931

ՀՊՄ·ՏԳՓ·2013
Ս-54
65.168

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊԳԼԽ. 6154(Բ)
ՊԱՏՎԵՐ 145
ՏԻՐԱԺ 1000

ՀՍՍՌ-ԱԳՄ-ՍՍՌ
ԷԷ33-51

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԼԻԲԵՐԱԼԻԶՄԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

«Հյուսիսափայլի» հասարակական «ժառանգությունը».— Անդրկովկասի իրականությունը.— Առևտրական կապիտալի թեմումը դեպի արդյունաբերական կապիտալիզմ.— Գրիգոր Արծրունի.—«Մշակը» իբրև կազմակերպող կենտրոն.— «Հիմնական խնդիրները».— Հակառակորդներ.— «Հայոց հարցը» և Արծրունու քաղաքական որիենտացիան.—«Սոցիալական հարցը» և լիբերալիզմի նոր ժառանգորդը.— «Մուրճ» ամսագիր.— Եզրակացություններ:

I

Արևելահայ լիբերալիզմի անդրանիկ արտահայտիչը Ստեփանոս Նազարյանի «Հյուսիսափայլ» պարբերաթերթն էր: Մի քանի տարվա իր գոյության ընթացքում վերջինս կարողացավ «գարթուցիչ մեքենա» դառնալ իր հասարակական դանդաղած լուսավորության գործում: Հաթիսունական թվականների նշանավոր սրգանը լուց այն պահուն, երբ ծանրության կենտրոնը տեղափոխվեց Անդրկովկաս, հատկապես Թիֆլիս մայրաքաղաքը: Հենց վոր լուսն է Նազարյանը, սկսում է Գրիգոր Արծրունին իր գրական գործունեությունը «Հայկական աշխարհ» հանդեսում, «Հյուսիսափայլի» խմբագրին իր ուսուցիչը համաբելու խոստովանությամբ: Այժմ հարցնենք. Անդրկովկասի տնտեսական և հասարակական կյանքը վո՞ր չափով նախապատրաստված էր լիբերալիզմի «նոր առաքյալին» ընդունելու համար:

Ինչպես հայտնի է, «փոխադրական կապիտալիզմը»—Փոքին Թիֆլիսի հետ կապող երկաթուղին սկսեց գործել Արծրունու պարբերաթերթի լույս տեսնելու տարում: Նույն ժամանակամիջոցում մի շարք գործարաններ են բացվում Թիֆլիսում. նրանց մեջ տիրող կարգն ու սարքը «Մշակի» խմբագիրը ներկայացրել է «Առաջին ծաղիկներ» հոդվածում: Հատկապես շեշտվում են մոմի և կտավի գործարանները: Բացվում ել սկսում է շարժվել գործարանային կյանքը.

«զումարատեր հա ապակութ՝ունը» այնուհետև դառնում է սիրող յերեխայի: «Մշակի» ապագա խմբագիրը— Ալեքսանդր Քարանթարն իր թղթակցությունների նյութ է դարձնում Բաղվի նավթարդյունաբերությունը:

Այդ առաջին ծաղիկները հասարակական անապատում չեյին բուսնում. նրանց համար հողը բավական մշակված էր նաև լեռնոլոգիայի բնագավառում: Յերբ 1864 թվականին դադարեց «Հյուսիսափայլը», Թիֆլիսում սկսեց լույս տեսնել «Հայկական աշխարհ» պարբերաթերթը, վոր համարում էր իրեն առաջնի չարունակությունը: Այդ թերթի խմբագիրը Թիֆլիսում բաց է անում յերկսեռ գպրոց՝ գործնականացնելով Նաղարյանի մի պահանջը.— աղամարդկանց «բարոյակրթել» աղջիկների հասարակության միջոցով:

«Հյուսիսափայլի» դադարումից յերկու տարի հետո Թիֆլիսում մի ուրիշ պարբերաթերթ է սկսում լույս տեսնել, վոր ավելի բնորոշ վերնագիր ուներ, քան Նորեն Ստեփանեանի որդանը: Դա «Վաճառականն» էր, վոր իրեն «առևտրական դպրեթ» էլ էր հորջորջում: Այդ «դպրեթը» շատ ավելի նեղ սահմաններում է գործում, քան «Հայկական աշխարհը», վորի մեջ «Հյուսիսափայլի» տրադիցիաներից շատ բան կար:

Մոսկվայի պարբերաթերթի հետ համեմատած՝ Թիֆլիսի որդանները շատ մատչելի յեն թե իրենց նյութով և թե լեզվով: «Գրե՛ք այնպես, ինչպես խոսում եք» մաքսիմը այստեղ շատ ավելի յե իրագործված, քան Մոսկվայում: Ընթերցողների կապը իրենց որդանների հետ ավելի սերտ է, բանակռվները հետաքրքրություն են զարթեցնում, մանավանդ Ստեփանեանի հակաճառությունները «Մեղվի» դեմ:

Ինչպես տեսնում եք, «զարթոնքը» ակներև յեր: «Կրիտիկական վզլին» սկսել էր գործել: Բայց այդ վոգուց ավելի նշանակալիցն այն էր, վոր լրագրության մեջ մուտք են գործում առորյա կյանք, առորյա հարցեր կամ «գործնական աշխատանքի» պրոբլեմներ:

Իդեոլոգիական յեռ ու գեռը, ինչպես տեսնում եք, պայմանավորված էր անտեսական կյանքի յեռ ու գեռով: Վաթսունական թվականների սկզբում Նաղարյանը հետամնաց յերևույթ է համարում համքարությունը, և մեկ և կես տասնամյակ հետո այս վերջինս արդեն տեղի յեր տալիս հետզհետե ուռճացող կապիտալիզմի առաջ, այսինքն մանր բուրժուական խավերը գլուխ եյին խոնարհեցնում խոշոր բուրժուազիայի առաջ: Վո՛չ միայն մանր-բուրժուազիան, այլ և յեկեղեցին իր դիրքերը զիջել էր «նոր տերերին»: Հայ հոգևորականությունն իրեն արդեն թ

ապաս էր դրել «ազգայնական բուրժուազիայի» բեալ քաղաքականությանը: Յեկեղեցին զարձել էր նոր տերողի դասակարգային զենքերից մեկը...

Ահա՛ թե ինչ նախապայմաններ ուներ արևելահայ լիբերալիզմի նոր շրջանը, վորի արտահայտիչ Արծրունին իրեն համարում էր Նաղարյանի աշակերտ: Ի՞նչ գրական ժառանգություն էր ստացել աշակերտը իր վարպետից:

II

Մինչև տասնիններորդ դարի յոթանասնական թվերի վերջը, այսինքն գրական ասպարեզ յելնելուց մոտ մեկ և կես տասնամյակ հետո՝ Գրիգոր Արծրունին շարունակ հեղհեղում էր այն խնդիրները, վորոնք մեծ մասամբ հրապարակ եյին հանված «Հյուսիսափայլի» էջերում: Վո՛չ միայն խնդիրներն եյին նման, այլ և «Մշակի» խմբագրի մոտեցումը մեծ մասամբ զուգադիպում էր Ս. Նաղարյանի դասակարգային մեկնակետին: Տարբերությունը միայն այն էր, վոր նոր հեղինակը շատ ավելի գործնական թեքում ուներ առաջադիր խնդիրները կյանքին հարմարեցնելու համար, և հենց ինքն այդ կյանքը հեղինակից անկախ սկսել էր իրականացնել Ստ. Նաղարյանի մի շարք պահանջները:

Զուգադիպության մի քանի փաստեր բերենք:

Նախ՝ լեզվի խնդիրը: Գրաբարը մեռած լինելու և նոր կյանքը աշխարհաբարով արտահայտելու փաստն ու անհրաժեշտությունն ընդունում է նաև Գ. Արծրունին գրեթե նման մեկնաբանությամբ: Գրաբարի հետ միասին մեր հին գրականության նկատմամբ ևս յերկու խմբագիրների մոտեցումը նույնն է, այսինքն հին գրականությամբ մենք չենք կարող «նորոգել մեր մեջ նոր կյանք ու նոր բարք»: Այդ բոլորով պայմանավորված է նոր զպրոցի և նոր մանկավարժության անհրաժեշտությունը: Արծրունին ևս կրթությունը մայրենի լեզվով սկսելու կողմնակից էր, ինչպես և Նաղարյանը. նախ՝ «հայենականը», ապա՝ «ոտարը»:

Յերկրորդ՝ յեկեղեցու խնդիրը: Արծրունին ևս ուզում է ոգտագործել հոգևորականության ուժը, դնել յեկեղեցին բուրժուազիայի հովանու տակ, նրա սեղուկի վրա հսկողություն հաստատել, «վարչական բեֆորմը» իրագործել, ծիսական պաշտամունքի մեջ մուծել «վեհ բովանդակություն» կրթված կրոնավորների միջոցով: Նաղարյանի պես Արծրունին էլ «այլադավան հայերին» ընդհանուր շահերի շուրջը համախմբվելու կոչ է արել. դրա հետ միասին միխոնարների դեմ պայ

քարից նա չի խուսափել: Ցերկուսն էլ պաշտպանել են քրիստոնեական կրոնը, նրա մեջ քմածին կերպով դնելով իրենց լիբերալ հասկացողությունները՝ «ազատության, եղբայրության և հավասարության» նշանաբանով:

Ցերրորդ՝ քաղաքական ինքնապահպանության խնդիրը: Արծրունին էս «ազգի» վողնաշարը համարում է «յերրորդ դասը», վորի քաղաքական դիծը պետք է լինի «ազգության» մեջ մտնող ուրիշ դասակարգերի վրա հեգեմոնիա ձեռք բերել, ցարիզմի հետ դաշնակցել և «խուլտուրապես բարգավաճել», սոցիալական հեղաշրջման դեմ պայքարելով: Վորովհետև յերկու հրապարակախոսի աշխատանքների մեջ քաղաքական ինքնապահպանությունն ամենից դինամիկ մասն է, ուստի և մի քանի վաստակ բերենք նրանց համամտությունը հաստատելու համար:

Ա. Ցերրորդ դասը «ազգի» վողնաշար: Նազարյանը «որինավոր ճանապարհներով նյութական վաստակավորությունը», «արդար ճանապարհներով վաստակած հարստությունը» ներբողելով, վոմանց առիթ է տվել մտածելու, թե նա մանր-բուրժուական խավերի դաղափարախոս է: Հետաքրքրական է նկատել, վոր Շահազիզն ու Բաֆֆին էս «արդար վաստակի» ջատագով են հանդիսանում Արծրունու հետ միասին: «Արդար» և «որինավոր» բառերը չպետք է մեզ շփոթեցնեն, վորովհետև դրանք ուղղված են նախնական կուտակման հոսի կողմերի դեմ, «անարդար» և «ապօրինի» արծաթասերներին խարանելու համար: Բարեգործ հարստությունը, «աշխարհաշեն» կուտակումը խնկելի յեն հիշված բոլոր անձերի համար էս: Այդ կուտակմանը պետք է տալ արդյունաբերական գործադրություն, վաճառական հայը պետք է դառնա արդյունաբերագործ հայ: Նազարյանի այդ պահանջը իր դրոշակն է դարձնում Արծրունին դեռ ուսանող յեղած ժամանակից, համոզելով գործարաններ բացաններ և մեր յերկրի հարստությունները մշակել: Տեխնիկական կատարելագործություն, ինդուստրալիզմ-ահա՛ աշակերտի պահանջը, վոր ըղխում էր վարպետի թեզիսից: Թե աշակերտ և՛ թե ուսուցիչ «հայերից» պահանջել են, վոր նրանք «հարստանան», հետևապես սխալ է այն տեսակետը, թե Արծրունու «նոր խոսքն» էր հարստացե՛ք պատգամը: Նման պահանջ արտահայտել է նաև Նազարյանը, հետևապես Արծրունու նոր խոսքը ա՛յլ տեղ պիտի փնտրել:

Բ. «Հասարակի» պաշտպանությունը: «Հյուսիսափայլը» ազայական դասի, հոգևորականության և բարձրատիճան պաշտոնեության դեմ կռվելով, նպատակ ուներ այդ բոլորին տանել հայ բուրժուազիայի հեգեմոնիայի տակ: «Հասարակի» նկատմամբ ներբողն էս նույն միտումին էր ծառայում: Հարկավոր էր մանր-բուրժուազիային լծել բարձրացող դասակարգի հպատակական կառքին: Նույնպես էր վարվում նաև Արծրունին. նա շատ էր սիրում «ամբոխը». բայց Նալբանդյանի մի կողմից, իսկ մյուս կողմից նրա ու Նազարյանի սիրո մեջ այդ ամբոխի նրկատմամբ շատ խոր տարբերություն կա: Յեթե վերջին յերկու հրապարակախոսների համար հարուստ հայը-ամենից ակտիվ գործիչն է «ազգաշինության», ապա ուրեմն նրանք վողջունում են այն «ամբոխին», վոր կուտակում է, այսինքն դուրս է գալիս իր շրջանից և մտնում «արդյունագործների» շարքը: Հոգևորականության և ազայության դեմ պայքարելիս՝ լիբերալիզմին հարկավոր էր մանր-բուրժուազիայի աջակցությունը: Այստեղից էլ ըղխում է «Հասարակի» պաշտպանությունը:

Գ. Կուլտուրական բարգավաճում: «Նահապետական» կարգը քանդելու և նոր բուրժուական քաղաքակրթություն հաստատելու համար հայ լիբերալիզմին հարկավոր էր մի վորոշ կուլտուրական «հեղափոխություն»: Ասիացին պիտի դառնար յեվրոպացի, հարեմական կինը՝ «ազատագրված քաղաքացի», հայրերի և վորդիների փոխհարաբերությունը մեջ պիտի մուծվեր «ազատության վոգին», պիտի ստեղծվեր հրապարակային «ազատ խոսք», ինքնաքննության իրավունք պիտի նվաճվեր, լուսավորական հիմնարկներ պետք է առաջանային, և այլն: Այդ բոլոր խնդիրներում համերաշխ են ընթանում ուսուցիչ և աշակերտ: Յեթե վոչ միայն համերաշխ, այլ շատ դեպքերում աշակերտը նույն բառերով պաշտպանում է ուսուցչի թեզը: Մի որինակ. կանանց ազատագրության խնդիրը: Նազարյանը պահանջում էր, վոր ազամարդը քաղաքակրթի կնոջը, վորպեսզի այդ ճանապարհով իր՝ ազամարդի բարքերը մեղմանան: Արծրունին էս նման պահանջ էր ներկայացնում, վորպեսզի կինը «բարոյական ազդեցություն ունենա»: «Հայ կինը... կհասկանա, վոր կոչումն է...մեղմացնող, բարոյականացնող ներգործություն ունենալ հայ հասարակության վրա», ասում է Գ. Արծրունին: Մի յերկրորդ որինակ. պատմական անցյալը դաստիարակչական արժեք ունի հայ «նոր սերնդի» համար: Պատմությունն այն ամբիոնն է, վոր ներկային դասերնդի համար: Պատմությունն այն ամբիոնն է, վոր ներկային դասեր է տալիս-Բաֆֆիի այդ խոսքը Նազարյանի համոզմունքի արձա-

զանքն էր: Արծրունին կրկնում է ուսուցչի խոսքը. «Գրիգոր լուսավորիչ, Վարդան, կրոնի և ազգի համար նահատակված մարտիկները, ասում է նա,...հարուցանում էին նորա (իմա՝ հայի) սրտում իր կորած կյանքի բարձր գաղափարները»: Այս «կորած կյանքը» վերականգնելու, ոտքերն հայ բուրժուազիայի համար իշխանություն նվաճելու, «ստոր գավազան» տիրելու մարմաջն էր, որը նրան ձգեց ցարիզմի գիրկը:

Դ.-Քաղաքական որիենտացիայի խնդիրը: Հայտնի է Նազարյանի «ուսամոլությունը»: Քաղաքականապես հայը ռուս է,—այդ վարքագիծը թելադրել է նրա վոգի աշխարհայացքի «ուղն ու ծուծը»: Նազարյանը քաղաքական հարց չէր ընդունում ռուսահայերի համար: Նա դեմ էր այն բանին, որը Միքայել Նալբանդյանը գործակցում է ռուս հեղափոխականներին: Այդ բոլոր կետերում Արծրունին Նազարյանի հավատարիմ աշակերտն է: Նա հակառակ էր ցարիզմի դեմ «ապորինի քայլերին»: Մի բանությունը գիտեր գնահատել իր բարեկամներին: Կովկասյան փոխարքան նպատակում էր «Հյուսիսափայլի» տարածման գործին, իսկ Կովկասի նահանգապետը գալիս էր անձամբ շնորհավորելու Արծրունու բանեհինդամյա հոբելյանը: Թե Նազարյանը և թե Արծրունին իրենց այդ քաղաքականությամբ անձնական դիծ չեին վարում, այլ արձագանք էին տալիս իրենց դասակարգի «բեալ պոլիտիկային»:

Նազարյանի և Արծրունու հրապարակախոսության նմանությունների խնդիրը սպառելու համար պետք է շեշտենք մի հանգամանք ևս: Մենք գիտենք, որ Նազարյանի և Պիսարևի մարքերի մեջ որոշ նմանություններ կան, զուտ զուգադիպություններ: Այդ նույն բանը կարելի է ասել նաև Արծրունու նկատմամբ: Առ այժմ մի կողմ թողնենք նոթեատիկական հարցերը, Պիսարևի «ոգտապաշտական զեղագիտությունը», որին արձագանքել է նաև Արծրունին: Այդ մասին խոսք կլինի հետևյալ առաջադրության մեջ («Արևելահայ լիբերալիզմը և բեալական արվեստը»): Այժմ խոսենք Արծրունու ընդհանուր իդեոլոգիայի մասին, որը մի քանի կետերում նման է «տեխնիկական ինտելիգենցիայի գաղափարախոսի» մտայնությանը Շատ բնորոշ է, որ Արծրունին ուսանող ժամանակը հոդվածներ է գրում բնագիտական կրթության մասին, այնուհետև «Մշակի» էջերը ձեռք առնելով՝ գրվատում է «անհատի կատարյալ ազատությունը», վերջապես, ինդուստրիալիզմի քարոզը կարդալով՝ նա հաճախ տուրք է տալիս «մտածող բեալիստին»: Ինչպես

հայտնի է, ինդուստրիալիզմը Պիսարևի հոդվածների «մեին» էր կազմում: Տեղ-տեղ բառացի նմանություններ կան Արծրունու և Պիսարևի գրվածքների մեջ. որինակ. նրանց վերաբերմունքը դեպի «միջին դասը» և սրա հետևանքով պատմական բեմ իջնելու անհրաժեշտության ներքողը: Մի նմուշ բերենք. Արծրունին 1876 թվին գրում է. «Մեզանում ամբողջ հասարակական ուժը կայանում է միջին դասի մեջ՝ գրագիտությունը, արվեստներով պարապողները... կոշկակարից սկսած մինչև բժշկապետները և ինժեներները, վաճառականությունը, մասավոր զարգացումը, ձգտումը դեպի ուսում, ինտելիգենցիան, արդյունաբերությունը,—բոլորը ամփոփվում է միջին դասի մեջ»:

Պիսարևը գրում է „Что же касается до средняго сословия, то... этот класс наполняет собою университеты, держит в руках литературу и журналистику, ездит за границу с ученой целью, словом, он выражает собою национальное самосознание“.

III.

Արծրունական լիբերալիզմը գնահատելու համար մենք պետք է նախ՝ տեսնենք թե ինքը այդ ուղղության հեղինակը վո՞ր խնդիրներն է համարում հիմնական, ապա՝ ի՞նչ նոր խոսք է նա ասել մեր հրապարակախոսական գրականության մեջ և, վերջապես, հակառակորդ հոսանքների ոպպոզիցիան իր գժգոհություններին վորպիսի ընթացք է տվել:

Արծրունին սովորություն ուներ իր առաջադրած խնդիրների շուրջը հաճախ հաշվեհարդար կատարելու և նրանց մեջ եյականի կամ հիմնականի վրա շեշտը դնելու: Իր գործունեության սկզբում, յերբ նա իր թերթի շուրջը խմբել էր տակավին պատահական տարբեր, տեղված թերթի շուրջը խմբել էր տակավին պատահական տարբեր, տեղված էջեր դուռ առաջ բերել սեփական շարքերում, և պոլեմիկա սկսելով հաճախ հակառակորդների դեմ, կամա թե ակամա շեշտում էր «հիմնական խնդիրները», վորոնք պիտի անջրպետ դառնային «Մշակի» և հակառակորդ հոսանքների միջև:

Արծրունու հաշվեհարդարներից յերկուսը շատ բնորոշ և կարևոր են հիմնական խնդիրների առաջադրման տեսակետից: Նախ՝ «Մշակի» ակզբնավորության շրջանը, ապա՝ Արծրունու գրական գործունեության քսանհինգամյա հոբելյանը: Առաջին շրջանում Գրիգոր Արծրունին իր գործունեության մեջ շեշտը դնում է հետևյալ խնդրի վրա. «Վանականության դեմ հարձակվել և նրա տեղ յերկրի ինքնուրույն արդ-

յունաբերության զարգացում հորդորելը»։ Սա մի խնդիր եր, վոր իր ժամանակին մեծ դիսկուսիա յե առաջ բերել և խիստ հանդիսացել «Մշակի» շուրջը խմբված գործիչների մեջ բյուրեղացում մացնելու։ «Մշակը» դառնում է սկզբնական շրջանում կազմակերպող կենտրոն՝ հիշված լոզունգի ժողովրդականացման պատճառով։ Նախնական կուտակումը պետք է ընթացք ստանա, «չինարար» ույժ հանդիսանա, կորցնի իր վաշխառվական բնույթը, գերազանցորեն արդյունագործական կերպարանք ընդունի։ Բավական է վորքան միջնորդ յեղանք, դարձե՛ք այժմ ազգանք արտադրողներ։ Այս պահանջը հասկացվեց իբրև վաճառական դասի վարկաբեկում, և Արծրունու դեմ սկսվեց Թունոտ արշավանք։ Այդ պահանջը «դուք գրեթե խմբովին վնասակար եյիք համարում,—ասում է Արծրունին իր հակառակորդներին,—ոչնչելով վոր հայոց ազգի գոյությունը, բացի յեկեղեցուց, հիմնված է վաճառականության վրա...»։

Արծրունու համար այդ խնդիրը սկզբունքային նշանակություն ուներ վոչ միայն իբրև անտեսական ազդակ, այլ և ընդհանուր քաղաքակրթական տեսակետից։ «Զուխտավոր» առևտրականը «յեվրոպական» արդյունաբերող դառնալով, դրա հետ միասին պետք է վերաքննե և վերանայե իր ամբողջ կյանքն ու գործունեությունը։ Ընտանեկան, դպրոցական, լեզվական, և այլ բեֆորմները պետք է դան լրացնելու «հիմնական» հեղաշրջումը։ Սկսենք «վերացական» հարցերից։ Որինակ· լեզվականը։ Մեր լեզուն աղքատ է, դանդաղաշարժ է, վորովհետև ընդհանրապես մեր կուլտուրական կյանքն է ասիականորեն դանդաղաշարժ, նոր ազդավորություններից թափուր։ «Մեր աղքատ, անտաչ աշխարհաբարը նմանապես արդյունք է մեր աղքատ հասարակական կյանքի»—ասում է Արծրունին։ Ինչո՞ւ յե այդ կյանքն աղքատ։ Վորովհետև «դեռ ևս ճանապարհներ և յերկաթուղիներ չկան, արվեստագործությունը զարգացած չե յերկրում, վաճառականությունն աննշան աստիճանին հասավ, ուսումնարանները բազմաթիվ չեն, ուսումնական կյանք չկա»։

Ընտանիքի մեջ ևս նույն անկուլտուրական վոգին է տիրում։ Առևտրա-վաշխառվական կապիտալի ներկայացուցիչը Մասիսյանն է, վոր իր ընտանիքում մի կատարյալ բռնակալ է։ Նրա վորդին հորից ազատվելու միակ հնարքը գտնում է նրանում, վոր գնում է ծառայելու արդյունաբերական կապիտալիզմի ծնած հարցին—մարտական նացիոնալիզմին։

Կնոջ վիճակն ևս նույն հետամնացության արդյունք է։ Այդ կինը կամ ստեր է, կամ կիսակիրթ։ Ցերկու դեպքում ևս նա չի կարող լավ մայր լինել։ Լավ մայր և լավ ամուսին նա կարող է դառնալ, յեթե ունենա ինքնուրույն աշխատանք։ Իսկ վերջինս արդյունք է զարգացած կյանքի, արդյունաբերական կապիտալիզմի առաջ բերած հրամայական պահանջներից է։ «Կանանց առաջ քաշելով՝ մենք նպաստում ենք պրոգրեսին» ասում է Արծրունին։

Դպրոցն ևս, մանկավարժությունն ևս կրում են իրենց վրա մեր ասիական կյանքի կնիքը։ Հարկավոր է գործնական կրթություն, հարկավոր է, վոր դպրոցը մատակարարե՝ նոր կյանքի գործիչներ։ Թողե՛ք վոր է, վոր դպրոցը մատակարարե՝ նոր կյանքի գործիչներ։ Թողե՛ք սխոլաստիկան և ընթացք տվեք «ժամանակի պահանջներին», այսինքն պատրաստեցեք մարդիկ, վորոնք լինեն «տնտեսական կյանքում արդյունավոր գործիչ», ասում է Գ. Արծրունին։ Նոր դպրոցից դուրս գեկած սանի ամենամեծ զենքը—ինքնաքննության վոգին է։ «Մնողոք ինքնաքննությունը,—ասում է Արծրունին,—մեր այժմյան հայերի մեջ միակ ուրախացուցիչ յերևույթն է»։

Ինչպես տեսնում եք, առաջին հիմնական խնդիրը՝ առևտրա-վաշխառվին արդյունաբերող դարձնելը՝ մի շարք ուրիշ խնդիրների կապակերպիչ կենտրոնն է հանդիսանում։ Ցերկրորդ խնդիրն ևս նման դեր է կատարում Արծրունու հրապարակախոսության մեջ։ Անցնենք այդ խնդրին։

Իր գրական գործունեությունն քանհինգամյակի ոտնակատարության ժամանակ Արծրունին մի ծրագրային ճառ արտասանեց։ Այդ ճառի մեջ նա տվեց իր աշխարհայացքի քվինտ էսենցիան։ Ասաց, վոր իր գրոչակի վրա գրված է «անհատականության զարգացումը»։ Այնպես, ինչպես ըմբռնում է հրապարակախոսն այդ պահանջը—դա անհատի իրավական ազատագրության լոզունգն է, վոր իր հետքում մի ահագին պատմություն ունի, սկսած բեֆորմացիայից, Լութերի ընդվզումներից և վերջացրած ֆրանսիական հեղափոխության «մարդու և քաղաքացու իրավունքների», դեկլարացիայով։ Արծրունին մեր հրապարակախոսության մեջ «ազատության, յեղբայրության և հավասարության՝ լիբերալ նշանաբանի ժողովրդականացնողներից մեկն է յեղել։ Իր այդ վոգեվորության մեջ նա այնքան է առաջ գնացել, վոր նույնիսկ քրիստոնեությունը զարձրել է այդ նշանաբանի հիմունքներով հորինված կրոն։ Ուրիշ խոսքով՝ նա խմբագրել է քրիստոնեական կրոնը իր դասակարգի պահանջների համեմատ։ Որինակ· Արծրունու կարծիքով կնոջ ազատագրության հիմքը դրել է քրիստոնեական կրոնը (?)։

Անհատականության զարգացումից լիբերալիզմը հետևցնում է բուրժուական հեղափոխության գործնական լոզունգը,—ամեն տեսակ դասերի վերացում՝ իբրև իրավական ապատագրության հետևանք: Ինչպես հայտնի է, մինչև XVI դարը իշխել է համայնքի սկզբունքը, անհատը տեղի չեր տված, կորչելով ընտանիքի, համայնքի, եկեղեցու, համքարության մեջ: Բուրժուազիան հանդես գալով՝ անհատի համար ինքնուրույնության հանելու կռիվ սկսեց, «անհատական ինքնուրույնության զարգացումը» (Շերվանդազեի տերմինն է) ներբողեց: «Այն ուղղությունը,—ասում է Արծրունին,—վորին մենք հետևել ենք, կարող է վորոշվել յերկու բառով. ձգտում դեպի «անհատականության զարգացումը»: Հրապարակախոսը պահել է իր ձեռքում «այն գրոշակը, վորի վրա արձանագրված է՝ մարդու, կնոջ, ընտանիքի, համայնքի, հասարակության, ազգի, ամբողջ յերկրի անհատական զարգացումը...»:

Այդ գրոշակի հետ կապված է Արծրունու սոցիալական դավանանքը: Տեսնենք այդ դավանանքի հիմունքները:

IV

Ճորտերի «ազատագրության» նախորյակին ռուս գրականության մեջ մի կատաղի վեճ տեղի ուներ գապադնիկների և սլավոնաֆիլների միջև: Առաջին հայացքից մի վերացական, նույն իսկ փիլիսոփայական խնդիր եր դրված, վիճողների առաջ-անհատական և համայնական ընկրությունների պայքարը: Հետո պարզվեց, վոր այդ «մետաֆիզիկական, վեճը ըստինքյան մի շատ իրական, նույնիսկ «պրոզայիկ» գործնական նպատակ ուներ: Այդ այն եր թե՝ ճորտերին պետք է անհող թողնել, թե հողավոր՝ ավելի լավ վո՞ր ձևն է ապահովում կալվածատիրական տնտեսությունը էժան և ոգտավետ աշխատող ձեռքերով, անհող ազատ անհատը, թե հողավոր կամ սակավահող համայնական գյուղացին:

Արծրունու քարոզն ևս անհատի ազատագրության մասին, յերբ փիլիսոփայական բարձունքներից իջեցնում ենք և դիտում իբրև գործնական քաղաքականության պահանջ, տեսնում ենք, վոր նրա սոցիալական բովանդակությունը շատ նեղ է: Անհատապաշտ Արծրունին, որինակ, չեր ուզում ազատել գյուղացի-անհատներին կալվածատիրության հանդեպ ունեցած պարտավորություններից: Նրա համարյա Բաֆֆին՝ «մշակ մարդու արքայությունը» քարոզելով հանդերձ՝ համաձայն չեր, վոր հողը հանձնվի գյուղացիների ձեռքն անվճար-նույն իսկ յերկու հարյուր տարի հետո գալիք Հայաստանում:

Թե Բաֆֆին և թե Արծրունին, յեթե գյուղացիության մասին խոսել են կամ քաղցր-մեղցր խոսքեր արել նրան, դրա պատճառն այն եր, վոր նրանք ցանկացել են այդ դասն ևս առնել բուրժուազիայի դասակարգային հեգեմոնիայի տակ: Մի քանի փաստեր բերենք Արծրունու գյուղացիական քաղաքականության բնագավառից:

Արծրունին հայ գյուղացիներին չարունակ խորհուրդ եր տալիս մեր սակավահողությունն ամոքել՝ կալվածատերերից համայնորեն հող գնելով: Կալվածատերերի հող ծախելու այդ իրավունքի դեմ նա յերբեք չի ըմբոստացել և վոչ մի տողով ակնարկ չի արել այն բանի մասին, թե գյուղացիները հարյուրավոր սերունդների անդադրում աշխատանքով արդեն բազմիցս «հետ են գնել» իրենց հողերը, ուստի և նոր հետ գնման վճարների մասին խոսք անգամ չի կարող լինել: Ընդհակառակը, նա և Բաֆֆին կարծում եյին, վոր նույնիսկ «Ազատ Հայաստանում» հողը պետք է հետ գնվի կալվածատերերի ճանկերից: Ո՞վ կարող եր հողը հետ գնել կալվածատերերից: Ազքատ և միջակ գյուղացին վոչ չունեյին: Փող ուներ հարուստ գյուղացին, վոր կարող եր և՛ կալվածատերին վարձ տալ, և՛ ազքատ ու միջակ գյուղացուն պարտք տալ «ասոմածային» տոկոսներով: Ուրեմն համայնորեն հող գնելու վոչ պատմությունը, վերջվերջո, վո՛չ այլ ինչ եր, բայց յեթե գյուղում ևս նպաստելու այն «քաղաքակրթական առաքելությանը», վոր կոչվում է կապիտալիզմ: Հայտնի է, վոր կապիտալիզմը ծաղում է վոչ այնքան սակավահողությունից, վորքան բավարար հողատիրությունից: Կապիտալիզմն- Ռուսաստանում զարգացել է հենց նման տնտեսական վիճակից: Դրա պատմական առավելությունն հենց այն եր, վոր մանր արտադրությունից առաջ եր բերում խոշոր արտադրությունը, զարկ տալով արտադրական միջոցներին:

Ինչպես տեսնում եք, գյուղացիներին Արծրունին պաշտպանում եր վոչ թե նրանց շահերից յելնելով, այլ «զեկավար դասակարգերի» սեպակնատիրական «սկզբունքից»: Արծրունու գյուղացիությունը՝ հողի վրա նստած, մայրենի լեզու պահող, «տերիտորիա» ստեղծող այն մասան եր, ավելի շուտ՝ այն բազմությունն եր, վորին հարկավոր եր դաստիարակել նոր քաղաքակրթության վոգով, գլխավորապես գրագետ և մտավոր միջոցով: «Ամեն հասարակության մեջ,—ասում է Արծրունին-միջին և բարձր դասերի ուղղությունը և վոգին տիրապետում է վոչ թե ստ վոչ

և ամբոխի վրա»։ Քաղաքներում ուռճացող կապիտալիզմի չոչափուկները եյին հենց այն փոխատու և խնայողական ընկերությունները, վորոնց միջոցով ուզում եր Արծրունին իբր թե գյուղի պրոլետարացման առաջն առնել, ինչպիսի նպատակի ձգտում եր նաև ռուս ռոմանտիկ Նիկոլայ-ոնը՝ միանգամայն այլ սկզբունքներից յելնելով։

Ինդիվիդուալիստ Արծրունին վո՛չ մայն գյուղացիության, այլ և՝ բանվորության բարեկամը չեր։ Հայտնի յե, վոր այդ հրապարակախոսը, յերբ հաչվեց Թիֆլիսում համալսարան բանալու մոքի հետ, զեկավարվում եր այն նկատառումով, վոր մեր յերիտասարդությունը զերծ պահի արտասահմանյան և ռուսական կենտրոններում բնակված «սոցիալիզմի թույնից»։

Ինդիվիդուալիստ Արծրունին պրոլետարիատը և սոցիալիզմը «չարիք» եր համարում, վորովհետև նա սոցիալական հեղաշրջման թշնամի յեր և կողմնակից «բնական, որգանական զարգացման» Կոնդի պոզիտիվիզմի խմաստով։ Նրա իդեալն եր քաղաքական ազատությունը. «մեծն քաղաքական կատարյալ ազատության միջոցով,-ասում է Արծրունին,—կարելի յե վերջնական մահվան հարված տալ այնպիսի սխալ, մնատակար և հակահասարակական վարդապետություններին, ինչպիսին և սոցիալիստների ապառնալի (ընդգծումը մերն է Ա.Տ.) վարդապետությունը»։

Ինդիվիդուալիստ Արծրունին «ազքատ», «մշակ» մարդու առաջ ի՞նչ հեռանկար է դնում.—քաղաքական ազատ կարգերում վո՛չ վոքի առաջ արգելք չկա իրեն տնտեսապես ապահովելու, «դրամագլուխ» ձեռք բերելու։ Հարստացե՛ք, վո՛չ վոք ձեզ չի արգելում,—և այդ ճանապարհով կազատագրվեք «սպառնալի վարդապետությունից»։ Գյուղացուն Արծրունին ասում է.—կալվածատերից հող գնե՛ր և հարստացիր, իսկ բանվորին հրահանգում է.—խնայողություն արա՝ և կհարստանաս... «Մենք ամբոխի համար ենք գրում», ասում է Գ. Արծրունին, նկատի առնելով եր այդ քարոզները, վոր նա կարդացել է գյուղացուն և մշակին։ Բայց այդ քարոզները տանում եյին դեպի մի վիճակ, վոր օբյեկտիվ կերպով ջուր եր ածում վո՛չ թե գյուղացու և բանվորի, այլ բուրժուազիայի ջրաղացին։

Այդ նույն բուրժուազիայի հեղեմոնիայի տակ է առնում Արծրունին վոչ միայն վերև հիշված տարրերին, այլ և հոգեվորականությանը, քրիստոնեական յեկեղեցին։ «Քրիստոնեությունը և Ֆրանսիական հեղափոխությունը» գրվածքի մեջ պատմագետ Ուլարը ցույց է տալիս, վոր

մեծ հեղափոխության գործիչներն աշխատում եյին Ֆիլոդոլական յեկեղեցին բուրժուականացնել և նրա պաշտոնյաներին դարձնել բուրժուազիայի աստիճանավորներ, վորոնց ընտրում են ցենզավոր տարրերը»։ Մեր գրականության պատմության մեջ հայ բուրժուազիայի նման ձգտումներին արտահայտիչ են հանդիսացել Նազարյանը և Արծրունին։ Վերջինը աշխատում եր յեկեղեցականներին ոռճկավոր պաշտոնյաներ դարձնել, իսկ ոռճկի սնդուկն բուրժուազիայի ձեռքին պահելով՝ յեկեղեցին չինել բուրժուազիայի դասակարգային հիմնարկներից մեկը, ինչպես ամմուլը, դպրոցը, և այլն։ «Կարելի յե,—ասում է Արծրունին,—հարկավոր ժամանակ վերանորոգություններ առաջարկենք յեկեղեցու արտաքին ձևի տնտեսական և վարչական կազմակերպության մեջ, առանց հանդգնելու-կրոնի եյական մասերին դիպչելու» (ընդգծումը մերն է. Ա. Տ.)։ Նույն փափկանկատությունն ուներ նաև Նազարյանը։ Մեր լիբերալները կրոնը պահում եյին «ամբոխին» սատակելու համար, այն ամբոխին, վորի համար իբր թե նրանք գրում եյին. մեկը գրում եր «հասարակի», իսկ մյուսը՝ «ամբոխի» համար...

Ինչպես տեսնում եք, Արծրունու յերկու սկզբունքները—հարստացե՛ք և ինդիվիդուալիզմը—վո՛չ միայն մեկը մյուսին պայմանավորող գաղափարներն են, այլ և իրենց հիմնական եյությամբ մեր գրականության մեջ նորություններ չեյին,նոր խոսք չեյին։ Հարստացե՛ք,—ասել եր նաև «Հյուսիսափայլը», ինդիվիդուալիզմի սկզբունքները պաշտպանել եր նաև Ստեփանոս Նազարյանը՝ արհեստավորական և ամատական կարգը քննադատելիս, հատկապես համքարության դեմ գրելիս։

Մեզ թվում է, վոր Արծրունին «նոր խոսք» է ասել մարտական նացիոնալիզմի բնագավառում. վո՛չ թե «հարստացեքն» է նրա նոր խոսքը, այլ ապստամբեցե՛ք։ Առաջին անգամ, յուրահատուկ թեքումով, նա հանդես բերեց տաճկահայ խնդիրը, առաջարկելով վոր դա լուծվի ապրատամբության ուղիով։ Առաջին անգամ նա տվեց հայ մարտական բուրժուազիայի ծրագիրը, մշակելով և կոնկրետացնելով դրա հիմունքները յերեք կետերում. նախ՝ հեգեմոնիա հայ ազգի մեջ մտնող բոլոր դասակարգերի նկատմամբ. յերկրորդ՝ ներքին շուկայի մեջ տիրապետություն և յերրորդ՝ արտաքին շուկայի փնտրտուք, ցարիզմի հետ դաշնակցելով։ Անցնենք այս վերջին խնդիրների մանրամասնություններին։

V

Գաղափարական գրականության մեջ առանձին ուշադրության եյութ է դարձել այն հարցը, թե ինչով բացատրել ռուսական բուրժուա-

դիայի դաշնակցությունը ցարիզմի հետ։ Իր «Ռուսաց պատմության»մեջ Մ. Պոկրովսկին այսպես և մեկնաբանում այս խնդիրը.—արդյունաբերական կապիտալին հարկավոր էր գյուղացու հողազրկումը, ուստ արդյունաբերության հովանավորումը արտաքին մրցման դեմ, հարկավոր էին դրսի շուկաներ։ Այդ բոլորի համար ուժեղ իշխանության անհրաժեշտություն էր զգացվում։ Մի կողմից ցարիզմի հետ բաժանելով իր թանը, մյուս կողմից առևտրական կապիտալին պիտի բաժին հաներ արդյունաբերական բուրժուազիան։ Այդ կրկնակի խոտական հաշվապահությունը նրան բավական թուլացնում էր և նա դառնում էր շրջահայաց և վախկոտ։

Արծրունին ասել է, որ Հայաստանը մի սիրուհի է, որ միշտ սիրեկաններ է ունենալ։ Այդ «Հայաստան» արտահայտությունը մեզ չպիտի մոլորեցնի։ Գյուղացիական Հայաստանը յերբեք սիրեկաններ չի փնտրել։ Հայաստանի նախ առևտրական, ապա արդյունաբերական կապիտալն է, որ միշտ սիրեկաններ է փնտրել շուկաների փնտրտուքի հետ միասին։ «Հայաստանը նման և մի կնոջ,—ասում է Արծրունին,—որ անթիվ սիրեկաններ է ունեցել։ բայց յուր այդ սիրեկաններից խոկապես վոչ մեկին անկեղծ սիրով չի սիրել։ Արդյո՞ք կսիրի նա մի որ անկեղծ սիրով, կընծայի նա յուր սերը մեկին անբաժան կերպով...»։ Յերբ Արծրունին դրում էր այս տողերը, հայ բուրժուազիան արդեն դաել էր իր սիրեկանին հանձինս ցարիզմի։ Այդ դյուտի մեջ խոշոր դեր են կատարել նույն այդ բուրժուազիայի խոշորների արտահայտիչ «Մշակ» լրագիրն իր խմբագրի հետ միասին։

Յերբ ռուսահայ բուրժուազիային այնքա՞ն մոտիկ էր թվում ցարիզմի տիրապետությունը Տաճկահայաստանում, Գ. Արծրունին Թիֆլիզում մի դասախոսություն կարդաց տաճկահայերի տնտեսական դրության մասին։ Այդ դասախոսությունը շատ բնորոշ է այն տեսակետից, որ գրանով Արծրունին իր ժամանակի ծանրաչափը հանդիսացավ և շատ ճիշտ կերպով ցույց տվեց թե ինչո՞ւ է արևելահայ բուրժուազիան գրաղվում «հայոց հարցով»։ Նախ՝ տաճկահայքում ապրող հայ գյուղացուն, արհեստավորին Արծրունին համարում էր արևելքում ապրող յեվրոպացի նա շատ բարձր է հարևան ազգերից իր քաղաքակրթությամբ, այսինքն իր աշխատանքի յեվրոպեպես զարգացած մեթոդներով։ Իրրև յեվրոպական ժողովուրդը նա իրավունք ունի յեվրոպական իրավակարգ ունենալու։ Յերկրորդ՝ Արծրունուն շատ ավելի հետաքրքրում էր վո՛չ այնքան տաճկահայ «ժողովրդի» ծանր վիճակը պատերազմի ժամանակ, որքան

նրա ապրած յերկրի հանքային հարստությունները, այն քնած ուժերը, որոնք սպասում են կապիտալի ներմուծման զարթնելու համար։ Յեվ յերբորդ՝ նման կուլտուրական ունակություններին տեր ազգը, որքան էլ փոքր լինի, ի վիճակի է իր մեջ ձուլելու շրջապատի շատ ուրիշ ազգություններին, որոնք դեռևս խարխափում են անկուլտուրականության բավիղներում։ Հայերը պետք է հայացնեն Հայաստանի անկուլտուրական ոտարազգիներին։ Արծրունու համհարզ Բաֆֆին իր «սոցիալական ուտոպիայի»մեջ ապագա Հայաստանն իր մտքի առաջ բերում է այնպիսի մի վիճակում, որ ազգաբնակչության տեսակետից գրեթե 100 տոկոսով հայություն է ներկայացնում։

Բացի թվի հարցից Արծրունուն զբաղեցրել է նաև տերիտորիայի հարցը։ Մինչդեռ նախորդ պատերազմների ժամանակ առևտրական հայ բուրժուազիայի գրեթե բոլոր գործիչներին, այս կամ այն չափով, խորթ էր տաճկահայքից զաղթականություն դուրս բերելով Անդրկովկասի հայության թվապես ուժեղացումը, Արծրունին 1876–1877 թ.թ. պատերազմի ժամանակ արդեն հակառակ է այդպիսի մի զաղթականության։ Դժվար չէ գուշակել պատճառները. նախ՝ Անդրկովկասում «հայությունն» արդեն տնտեսապես տիրող էր, և յերկրորդ՝ հարկավոր էր տաճկահայքում հայերի թիվը չէջեցնել, որպեսզի շրջապատի «ցեղերի» նկատմամբ զինական և տնտեսական էքսպանսիան իր ուժի մեջ մնա։

Իսկ որ Արծրունին իր նացիոնալիստական հայացքներն առաջ տանելու համար զենքի կուլտ ուներ, դրանում վոչ մի կասկած չկա։ Կուլտուրապես կլանումը դանդաղ պրոցես է, ավելի շատ և արմատական է «զենքի քննադատությունը»։ Տաճկահային նա առաջարկում է «մի ձեռքով մուրճ, արոր կամ բահ բռնել», իսկ մյուս ձեռքով հրացան։ Ինչո՞ւ համար։ Վորովհետև «Յերոպան սկսում է հարգել մի ազգության միայն այն բոպեյից,—ասում է Արծրունին,—յերբ այն ազգը կենքը ձեռին սկսում է իր և իր թշնամու արյունը թափել ազգային ազատության համար»։

Սա արդեն Գամառ-Քաթիպայի «արյուն վորթ թող հայը» մաքսիմն է, այն Գամառ-Քաթիպայի, վորին դեռ ուսանողության տարիներից իր զաղտիարարական կուռքն է համարել «Մշակի» խմբագիրը։ Հետաքրքրական է նկատել թե «ազգի յերդչի» ի՞նչ առանձնահատկություններն են գրավել Գ. Արծրունուն։ Վերջինիս համար Գամառ-Քաթիպան սիրելի, թանգագին, հանճարեղ և մեծ է, վորովհետև նա պատկանում է գործիչների այն ալեհադային վոր «հարվածել է անցած դնացած հնությունը, քարոզել նորը, պախարակել կիսակիրթ կյանքը և մեծարել բուն քաղա-

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՔԻՎԻ ՀՍՍՀ

քաղաքական զաղափարը...»։ Կիրակիրոսի կյանքի դեմ բուն քաղաքական քաղաքական վիճակ ստեղծելու համար հայ բուրժուազիան իր ձեռքն է մեկնել նաև յեկեղեցական հիմնարկին, և օրա պաշտոնյաներից մի քանիսն ազատ քաշել իրրև «բուն քաղաքական զաղափարի»ներկայացուցիչներ։ Արծրունին զմայլանքով է խոսել վո՛չ միայն Գամառ-Քաթիպայի, այլ և Մկրտիչ Խրիմյանի մասին։ Ապա նա իր համակրանքն է հայտնել նաև Ներսես Վարժապետյանին, Սեբաստիայի արքեպիսկոպոսին, և այլն։

Բոլոր այդ գործիչներին ի՞նչն էր իրար կապում —«նոր ազգության զաղափարը», բուրժուազիայի գերիշխանության պաշտամունքը։ Այդ գերիշխանության համար Արծրունին պատրաստ է ամեն բանի — նախ՝ իրականությունն աղավաղելու, ապա՝ պատմությունը մոդեռնիզացիայի յենթարկելու։ Իրականությունն աղավաղում էր այն առանկետից, որ նա «հայերին» համարում էր լուսավորության մի փարոս, շրջապատի ժողովուրդներից անչափ բարձր, իսկ մյուսներին, օրինակ՝ Թուրքին—վայրենի (?!)։

Պատմությունը մոդեռնիզացիայի յենթարկում, յերբ Արծրունին պնդում էր թե՝ «չորրորդ դարում հայերը միակ (?) արևելյան ազգությունն էին, որը խելք ունեցավ քրիստոնեությունն ընդունելու»։ Իսկ վերջինիս օգուտները են— ազատություն, յեղբայրություն, հավասարություն։ Բուրժուազիայի գերիշխանության պաշտամունքը վո՛չ միայն դրդում էր Արծրունուն իրականությունն աղավաղելու, պատմությունը մոդեռնիզացիայի յենթարկելու, այլ և ռուսական ցարիզմի համարդար դառնալու։ Այժմ անցնենք այս վերջին հարցին։

VI.

Ինչո՞վ բացատրել Արծրունու ռուսամոլությունը, ուրիշ խոսքով՝ հայ բուրժուազիան ի՞նչ կարիք ուներ ցարիզմի գերին ընկնելու։

Անդրկովկասում արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը իրաս կերպով չեչաում է բուրժուական մտայնության յերկու գիծը — նացիոնալիզմ և պետական պաշտամունք։ Եվ թե առաջինի նպատակը հարևանակորդների դեմ մրցում և նշանակում՝ չուկաների վորոնումով հանդերձ, յերկրորդ գիծը՝ պետության հմայքի բարձրացումը, նրան համաժողովրդական ինստիտուտ հրատարակելը—դա ներքին քաղաքականության միջոցներին և ապասավորում՝ մյուս դասակարգերին բուրժուազիայի հեգեմոնիայի տակ առնելու ձգտումով հանդերձ։

Այդ կրկնակի նպատակով ռուսական ցարիզմի արյունոտ ներկայացուցիչը՝ Չերնիշևսկու գահիճ Ալեքսանդր յերկրորդը դառնում է Արծրունու և հայ բուրժուազիայի համար «սիրելի թագավոր», վորին հանձնում են «հայ ազգի» ճակատագիրը, նրան տարկական ուղերձ մատուցանելով ռուս—տաճկական պատերազմի միջոցին։ Ցարիզմն էլ գիտեր իր հերթին չոյել հայերի ազգասիրական զգացմունքները։ Ալեքսանդր յերկրորդը Վանի ռուսական հյուպատոս է նշանակում ծագումով հայ մի չինովնիկի այն բանից հետո, յերբ պոլսահայ բուրժուազիան ևս ռուսոֆիլական ցույց է անում կայսեր դեմ կատարված անհաջող մահափորձի առիթով։

Իր կողմնակցությունը Ռուսաստանին և թշնամությունը Տաճկաստանի դեմ Արծրունին բացատրել է նաև յերկու յերկրների պետական սիստեմների տարբերությամբ։ Ռուսաստանը ցենտրալիստական պետության մի պերճախոս նմուշ է, մինչդեռ Տաճկաստանի ծայրերի և կենտրոնի միջև չկա այն սերտ կապն ու միությունը, որ ստեղծում է «խելական պետական կյանք»։ Վերջինս յեվրոպական քաղաքակրթության ծնունդ է, վորից զրկված եռանկուլտուրական մոնղոլական ցեղը», այսինքն թրքությունը։ Կենտրոնամիտ և ուժեղ պետական իշխանության այդ կուլտը, ինչպես ասացինք, բուրժուազիայի պաշտամունքն էր և վոչ թե միայն Արծրունու տոսկական կարծիքը։ Վո՛չ միայն պետության կուլտը, այլ և նացիոնալիզմը զարձել էր արդեն բեալ քաղաքականության ազդակ։ Թուրքը անընդունակ և յեվրոպական պետականություն ստեղծելու, վորովհետև նա «վայրենի յե», ասում է Արծրունին։ Նա չի կարողանում գնահատել կուլտուրական հայի արժեքը։ «Կարծես թե,—ասում է Արծրունին,—վայրենի Թուրքը մտավորապես այնքան զարգացած է, վոր կարող է հասկանալ թե...իրան ել վնաս է, յեթե աշխատատեր, ընդունակ հայոց ազգի պես տարրը գտնի իր պետությունից»։

«Աշխատասեր, ընդունակ հայոց ազգը» իրավունք ունի ինքնուրույն պետական կյանքով ապրելու ցարիզմի հովանավորության տակ, իսկ յեթե դա անհնարին է, թո՛ղ Տաճկահայքը միանգամայն կցվի Ռուսաստանին և դառնա նրա պրովինցներից մեկը։ Յերկու դեպքում հայ բուրժուազիան իրեն վոտքով ու ձեռքով դնում էր «սիրելի թագավորի» գրկում։ Ահա՛ թե վորտեղ պետք է տեսնել Արծրունու վերև հիշված զարձվածքի իմաստը—Հայաստանը միշտ սիրակոներ և փնտրել։ «Հայերը,—ասում է Արծրունին,—կարող եյին վորպես միջոց ծառայել Փոքր Ասիայում Ռուսաստանի նպատակը իրագործելու համար»։ Վո՞րն է այդ նպատակը—Քաղաքակրթության լույս տարածել

«քաղաքակրթության թշնամի տարրի» (իմա Թուրքերի) տիրապետության տակ գտնվող ժողովուրդների մեջ:

Ահա այս կերպ ցարիզմը—յեվրոպական ժանդարմը—պատնեշում է հայ բուրժուազիայի համար քաղաքակրթության դրոշակ: Ցեղ նրա մղած կռիվը Թուրքիայի դեմ, վոր վոչ այլ ինչ եր, բայց յեթե առևտրական ճանապարհների նվաճում արդյունաբերական կապիտալիզմի առաջ,—հայտարարում է լույսի պատերազմ խավարի դեմ, քրիստոնեության խաչի պայքար կիսալուսնի դեմ: Հայ բուրժուազիան ներքրվում է այդ պատերազմը, «խաչակրաց արշավանք» է անվանում այն «ցանկանանք մեր ղորքերին հաղթություն,—գրում է Արծրունին,—վորից կախված է արևելքի ազատությունը (?)...»: «Մշակի» խմբագիրը պարծենում է, վոր «մեր ազգության հանճարը» պատերազմի ժամանակ «սիրելի Թագավորին» մատակարարել է «քաջ և ընդունակ զինվորականներ»: «Սիրելի Թագավորը» կռվում եր «հանուն արդարության, մարդկային իրավունքների, քրիստոնեական գաղափարի»: Իսկ Արծրունու ցարիզմը գործում եր անշահասիրությամբ, և անկեղծությամբ: Ռուսական լիբերալ բուրժուազիան ևս աշխատում եր ցարիզմը դարձնել Արևելքի և Բալկանների ազատարար: Ձերնիչևսկու գահին «ազատարար» տիտղոս տվողներից մեկն էլ այդ լիբերալ բուրժուազիան եր, վոր ընկած Թագավորի վոտքը նրան ազերսում եր, գրելով 1878 թվի զեմստվոյական խնդիրը, պետիցիան — «տուր քո ժողովրդին այն, ինչ տվել ես Բուլղարիային»:

Մ. Գոկրովսկին բացատրել է, նախ՝ ռուսական բուրժուազիայի այդ Թագավորասիրությունը, ապա՝ արևելյան հարցի դրդապատճառները: Նախ տեսնենք մեկը ,հետո՝ մյուսը:

XIX դարի յերկրորդ կեսից ավելի մեծ թափ և ստանում արդյունաբերական կապիտալիզմը, և ցարերը սկսում են նրան խնամել ճիշտ այնպես, ինչպես առաջ առևտրական կապիտալին: Սրա համար առևտրական ճանապարհներ եյին հայթայթում, իսկ արդյունաբերության համար շուկաներ, դիմելով հոլանավորող մաքսային քաղաքակրթության: Այդ հանդամանքը շատ խոշոր քաղաքական նշանակություն ունեցավ: Հանդես գալով ամենից ուշ, յերբ ամենուրեք շուկաները բռնված եյին, ռուս բուրժուազիան պետք է ուժեղ բռունցքի կուրս ունենար, բայց վորովհետև այդ բռունցքը խոշոր հողատիրական եր, ուստի և այդ բուրժուազիան գտնում եր հետամնաց՝ իր կապի շնորհիվ միապետական դիտի հետ:

Գալով յերկրորդ խնդրին, «արևելյան հարցին», վոր քրիստոնեության և մահմեդականության կռիվ եր համարում Արծրունին, Մ. Գոկրովսկին բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, վոր այդտեղ տակը հաշիվ եր միայն, և ուրիշ վոչինչ: Քրիստոնյա յեվրոպացիք Բերլինի վեհաժողովում պաշտպանեցին մահմեդական Թուրքիային: Իսկ շատ հաճախ և պատահել, յերբ քրիստոնյա ցարիզմը Թյուրքիայի քրիստոնյաներին մատնել է մահմեդականների սրին, վորովհետև այդպես են պահանջել նրա քաղաքականությունն ու շահերը: Որինակ. կրետացիների ապստամբության ժամանակ Ռուսաստանը ոժանդակեց Թյուրքիային՝ ապստամբների վրա ճնշում գործադրելով: Իր պատերազմին ցարիզմը տվեց այդ քրիստոնեական յերանգավորումը, նա ստեղծեց պանսլավոնական վոգևորություն, վորի յերեք քառորդը զլխովին արհեստական եր և չինծու, այդ կերպ «ազատարար կայսրը» ամեն կերպ աշխատում եր ժողովրդի ուշքը ներքին քաղաքականության խնդիրներից դարձնել արտաքին քաղաքականության վրա: Հետաքրքրական է բուն ժողովրդի, Բալկանյան Թերակղզու գյուղացիության վերաբերմունքը դեպի ազատարար ռուսները: Պատերազմի մասնակիցներից մեկը գրում է: «Գյուղացիությունը իրեն շատ զուսպ եր պահում, նույնիսկ մոայլ և անհյուրընկալ մերոնց նկատմամբ... ինչո՞ւ. վորովհետև այդ խաղաղ մարդիկ յերբեք էլ չեն մտածել ռուս կորքեր հրավիրելու»:

Հեղափոխությունից հետո գաղտնի դաշնագիրների լույս հանելը շատ ու շատ խնդիրներ է պարզել: Մանավանդ Սան Ստեֆանոյի դաշնագրությունը, վոր այնքան վոգևորություն եր պարգևում «Մշակին» և իր խմբագրին—վոչ այլ ինչ եր, բայց յեթե դեպլոմատիկական քայլ, ամենի շուտ՝ խաղ ռուս կառավարության կողմից: Պարզվում է, վոր ցարիզմը առաջուց գիտեր, վոր Սան Ստեֆանոյի դաշնագիրը պիտի վերքանելի յեվրոպական վեհաժողովի կողմից, ուստի և նա աշխատում եր այդ Թուղթը լցնել բազմաթիվ պահանջներով, վորպեսզի զիջումներից հետո տակին մի բան մնա: Պարզվում է դարձյալ, վոր Թուրքական դիվանագիտությունն ևս իրագեկ եր այն բանին, վոր Սան Ստեֆանոյի դաշնագիրը մի անպետք թուղթ է, ուստի և նա այնքան զիջող եր այդ Թուղթը լցնելու ժամանակ: Արծրունին շարունակ Անգլիային ներկայացնում եր Ռուսաստանի Թշնամի և հակառակորդ արևելյան հարցի լուծման խնդիրներում: Այժմ պարզվում է, վոր յերկու պետությունների միջև մի գաղտնի դաշնագիր և կնքվել Բերլինի վեհաժողովի նախորյակին, վոր միանգամայն ավելորդ և դարձնում այդ վեհաժողովի վորոշումները, վորովհետև հիմնական խնդիրներն արդեն լուծված եյին

լոնդոնյան կոնվենցիայում Ռուսաստանի և Անգլիայի միջև...

Այդ բոլորը պարզվելուց հետո այժմ շատ դավեշտական է թվում Սան Ստեփանոյի դաշնագրի ազդեցության տակ Արծրունու այն պահանջը, թե այժմ արդեն ժամանակ է, որ Գոլոի «Ազգային ժողովը» անդամափոխվի Հայաստան: Իր ժամանակին այդ պահանջը շատ որոմիտ կերպով ծաղրել է յերգիծաբան Հակոբ Գաբոնյանը:

Արծրունու հակառակորդների մասին խոսելով, պետք է նշատակել, որ մանր-բուրժուազիայի գաղափարախոս այդ յերգիծաբանը սկզբունքով ժխտում էր Արծրունու լիբերալ հրապարակախոսության պահանջները, նրա «այլանդակ գաղափարները», մինչդեռ բուրժուազիայի աչքերը Արծրունու սրինոսացիայի հետ համաձայն չեր, սակայն նրա պարծունելությունն ոգտակար էր համարում: Յերբ Արծրունին մեռավ, նրա մասին ներբող գրողներից էր նաև Եջմիածնի «Արարատ» ամսագիրը, հայ յեկեղեցու պաշտոնաթերթը, այն յեկեղեցու, որի գլխավորին մեծամեծ ջանքեր թափելուց հետո ընտրել էր ավել ինքը՝ «Մշակի» խմբագիրը:

VII

Արծրունու պատմահայեցողությունը, հրապարակախոսական տաղանդը և տեղը մեր դրականության մեջ որոշելու համար մենք կարիք ենք համարում այստեղ հիշատակել նրա հայացքները «կանանց հարցի» նկատմամբ: Հատկապես այդ հարցն ենք վերցնում, որովհետև Արծրունին դրանով զբաղվել է իր գրական ասպարեզ իջնելու որից սկսած մինչև մահը, այսինքն քառորդ դարից ավելի: Մենք կաշխատենք Արծրունու մտքերը մեջ բերել իր իսկ բառերով, որպեսզի ընթերցողը նրա վոճի և գրելակերպի մասին ևս մի որոշ գաղափար ունենա:

Գրիգոր Արծրունին դանդատվում է հայ կնոջ հետամնացության դեմ: Հայ կինը մի մեքենա յե, կրավորական գործիք, մանավանդ գյուղերում և գյուղական կյանքում: Թե հարուստ և թե ազքատ գյուղական բնտանիքում կինը աշխատող է, մեքենայական գործիք է: Տան աղջիկը ամենից առաջ քնից վեր է կենում, ամենից ուշ պառկում է, որ կարողանա իր վրա դրած տնային ծանր պարտականությունները կատարել: Շատ տեղ կինը ոտքով ծածկում է իր յերեսը: Նա դառնում է բոլորովին կրավորական եակ: Հայ կինը ագետ է: Այդ կինը, յերբ սկսեց ուսում առնել, նրա առաջին դասատիրակները ուսուցիչները հանդիսացան, ուստի և նա խորթացավ հայ հոգուն, հայ լեզվին: Յեվ արդյունքում մի անդունդ փորվեց ազամարդի և կնոջ միջև: Այդ բանում մեր հրապարակախոսը ազամարդին է մեղադրում: Մեր սեպհական հանցանքն է, յեթե կինը դառնում է մեր հակառակորդ: Շեշտելով այդ մասին հայերեուցիային կրթության վրա, Գ. Արծրունին դանում է, որ հայ կնոջ մարդկային արժանավորությունը շատ և ճնշված: Կինը պետք է հասկանա, որ իր ստրկության և խոնարհության պատճառը նրանումն է, որ ինքն իրան չի կերակրում, այլ թե մարդը միշտ կարող է ասել՝ հնազանդի՛ր, յեթե վոչ քաղցած կմեռնես: Կանանց առաջ ազատագրության ուղին բաց է անում կրթությունը և ինքնուրույն աշխատանքը:

Արդի հայ կինը (1873 թ.) կիսակիրթ է. նրա մեջ վո՛չ կա հայ նահապետական կնոջ անդիտակցական ազգասիրությունը, որը ավելի սոխրության ծնունդ է, քան ազատասիրության. վո՛չ էլ ճշմարիտ է ազատ ազգասիրական գաղափարը: Հայ կինը գանվում է կես ճանապարհի վրա: Նա մինչև անդամ չի կարող լավ մայր լինել, որովհետև չունի վո՛չ բարձր գաղափարներ, վո՛չ անկախության զգի, վո՛չ ազատ հոգեբանություն: Յեթե հայ կինը V դարում մասնակցություն ցույց տվեց ազգային շարժմանը, դրա գլխավոր պատճառն այն եր, որ նույն ժամանակ տիրում եր դեռ ես չաղավաղված քրիստոնեությունը: Կինը տարագայում դարձավ անտարբեր, որովհետև մենք հեռացանք սկզբնական մաքուր քրիստոնեությունից, որովհետև մեր յեկեղեցու մեջ հնարքաքուր հեռվեցավ, արտաքին արարողությունը գերակշռեց մտքին, հետ մղեց կենդանի խոսքը և նրա տեղը դրեց ծիսակատարություն:

Ինքնուրույն անկախ աշխատանքի միջոցով պետք է կատարվի կնոջ վերածնությունը: Կինը, յերբ կհասկանա թե ամուսնությունը ոչնչ հիմնարկություն չե նրա համար, այլ կա և մարդուց անկախ գրություն, իր սեպհական աշխատանքով ապրելու հնարք, նա էլ իրան ավելի կհարգի, նա էլ ավելի բարոյական կդառնա: Այսպիսի կինը ամուսնանալով կասի իր ամուսնուն.—Յես քեզ հավասար եմ, յես քո ընկերն եմ քեզ հավասար պարտավորություններով և իրավունքներով: Մինչդեռ հայ ընտանիքի հիմքը հավասարությունը և սերը չե, այլ ասիական բռնի, կոպիտ և յեսական իշխանությունը: Հայ ազամարդը նայում է կնոջ վրա, ինչպես իր սեպհականության վրա և տեսնում է նրա մեջ միայն յերկու արժանավորությունը՝ կամ արտաքին գեղեցկություն, կամ նյութական հարստություն:

Հայը չունի վոչ բնատնական, վոչ էլ հասարակական սեր: Առաջի՛նի ապացույցը մեր հին ու նոր գրականությունը, ժողովրդական յերգերը

գերը, որոնց մեջ կա միմիայն անասնական սեր, սեր դեպի կնոջ մարմնի հրապուրիչ գեղեցկությունները, և ո՞չ թե իդեալական, բարոյականացնող սեր: Հասարակական սիրո բացակայության ապացույց հայի հակումը դեպի գաղթականություն, դեպի միմյանցից ցրվելը, միմյանցից փախչելը:

Հայ ընտանիքի տխուր պատկերը Գ. Արծրունին բացատրում է մահմեդականության ազդեցությամբ: Քրիստոնյա ցեղերից չի կարողանում այդ վարդ դեմ կռվել, որովհետև հոգեվորականությունը ազգա և, ավելի շուտ անգրագետ: Հայ ժողովրդի կուլտուրապես բարձրացման մի խոշոր ազդակը պետք է համարել կնոջ հասարակությունը: Այն բոպեից սկսած, երբ հայ կինը կմեկնի մեզ ոգնության ձեռք, կրկին կվերադառնա հայությանը, մենք կկարողանանք մեզ փրկած ասել ու ժողովրդի մտավոր ու բարոյական վերանորոգության գործը հաջողված համարել: Այդ վերանորոգությունը պետք է կատարվի ուսման և ինքնուրույն աշխատանքի միջոցով:

Կանանց կրթությունը պետք է տարվի այնպես, որ սեռականին մերացած լինի գործնականը. պետք է կինը հասարակության մեջ աշխատանքի տարածում ունենա՝ անկախ լինելու համար: Ուսման հետ միասին պետք է տալ և բարոյական դաստիարակություն. մի ժողովուրդ, որ դուրկ է կրոնի և ընտանիքի դաստիարակությունից, այդ տեսակ ժողովուրդից դուրս կդան միայն ուսում առած սրիկաներ: Զարդարված կուկլաները մի հասարակության հետամնացությունն են ցույց տալիս նրանք ապամարդուց պահանջում են միայն հարստություն և վատկացություն: Այն ինչ սիրո բացակայությունը մի հասարակության մեջ ապացույց է այն հասարակության մեջ քաղաքակրթության բացակայության:

Կնոջ հարց մեջ կա նորատիպություն. տղամարդը ավելի հնասեր է, պահպանողական. կանանց առաջ քաշելով, մենք նպաստում ենք պրոգրեսին: Այդ ուժից մենք չենք ոգտվում, որովհետև կնոջը դարձրել ենք հարեմական: Եթե աղջիկը պատրաստ է համարվում ամուսնական բեռը տանելու, նա պետք է պատրաստ համարվի և լայն հասարակական պարտավորություններ կատարելու, որովհետև առաջինը նուրբան պատասխանատու մի գործ է, որքան յերկրորդը: Ընտանիքի և հասարակության կապը շատ մեծ է. ընտանիքը ներկայացնում է հասարակությունը փոքր դիրքով. հասարակությունը ուրիշ բան չէ, յեթե ոչ ընտանիքների գումարումն: Այդպիսով՝ յեթե ուզում ենք բարոյապես և մասնավորապես վերանորոգել հասարակությունը, նախ պետք է ջանք վերանորոգել ընտանիքը:

Արծրունու աշխարհայացքի բնույթը և հետևողականությունը վոչ մի տեղ այնպես ցայտուն կերպով չի յերևում, ինչպես կանանց հարցի դրման և լուծման ժամանակ: Այս խնդրի մեջ մեր հրապարակախոսի կապը շատ վորոշ է թե արևմտաեվրոպական և թե արևմտահայ լիբերալիզմի հետ. Ջոն Ստուարտ Միլը և Սաեփան Վոսկանը կանանց հարցի առթիվ շատ մտքեր են արտահայտել, վորոնք գրեթե բառացի կերպով նման են Արծրունու հայացքներին: Դա պլագիատ չէ, այլ սոցիալական նման հոգեբանության արդյունք:

Արծրունին էս, իբրև լիբերալ, կանանց հարցը լուծում է առանց բուրժուական հասարակարգի հիմքերին ձեռք տալու: Կրթության և ինքնուրույն աշխատանքի միջոցով նա կնոջը ազատագրություն է խոստանում: Ի հարկե, դա «ազատագրություն»կրքերի, բայց վոչ թե սոցիալական ազատագրություն,այլ մեր ասիական բարքերի մեղմացում, յեվրոպականության պատվաստում, «հարեմի» վերացում:

Այնուհետև կանանց հարցի դրությամբ պարզվում է Արծրունու իդեալիստական պատմահայեցողությունը: Կնոջ սոցիալական կախումը տղամարդուց նա բացատրում է մահմեդականության ազդեցությամբ: Գաղթականության պատճառը համարում է «հասարակական սիրո բացակայությունը»: Մի ուրիշ տեղ ասում է թե՝ արևելյան հարցը կլուծվի այն ժամանակ, յերբ մահմեդական կինը կազատագրվի. «Այդ նույն օրը,—ասում է Արծրունին,—կլինի և մահմեդական տիրապետության յենթակա քրիստոնյա ցեղերի ազատության օրը»: Առհասարակ կրոնին մեր հրապարակախոսը տալիս է շատ խոշոր դեր հասարակական զարգացման գործում: Որինակ՝ արևելքի վողջ հետամնացությունը նա բացատրում է մահմեդական կրոնով, որի հետ «անբաժանելի յենք դառնում,—ասում է Արծրունին,—արևելքի բացակայությունը, կամապաշտություն, բռնություն, ոգիություն, դերդաստանի և սեպհականության բացակայություն» (?!), և այլն:

Մինչդեռ մահմեդականությունը խավարի սիմվոլ է, քրիստոնեությունը հակակշիռ է, «Մեզ համար ամենից բարձր, ամենից սուրբ են,—ասում է Արծրունին,—քրիստոնեական վարդապետության հիմնական դաղափարների հավետենական (?!) սկզբունքները»:

Կրոնի և յեկեղեցու խնդրում Արծրունու հրապարակախոսության մեջ շատ բան կա «Հյուսիսափայլից» և Սա.Նազարյանից: Առհասարակ յեր-

կուսի պատմահայեցողությունը շատ կեսերում զուգադիպում է։ Արծրունին էլ Նազարյանի պես մտավոր աշխատանքը համարում է գոմեշն ուրիշ աշխատանքների հիմքը և կառավարիչը»։ Արծրունին իբրև նպիրան Նազարյանի լուսավորական մտքերը յերբեմն հանգնում է արտուրդի-որինակ՝ նա ասում է. «կարդալ գրել չիմացողը, ի հարկէ, գտնել չի կարող» (?!)...

VIII

Դրիվը Արծրունու տեղը մեր գրականության մեջ վորոշելու համար պետք է առաջուց ասենք, վոր նրա արժեքը շատ է գերագնահատված իր աշակերտների կողմից։ Ֆրանց Մերինգն ասել է, վոր կենսագրության գրողը պետք է յերկու հատկություն ունենա. նախ՝ հիացած լինի իր հերոսով, և ապա՝ ընդունակ լինի նրան քննադատելու։ Ինքը Մերինգը այդ յուց է տվել, գրելով Կարլ Մարքսի ընդարձակ կենսագրությունը, ուր այդ հիացած աշակերտը իր անմոռանալի ուսուցչի պակասությունները և անթերա կերպով մերկացրել։ Մեզանում այդպես չե յեղել։ Գ. Արծրունու աշակերտները հիացել են, բայց գրեթե չեն քննադատել նրան։ Ցերկու վատ բերանք։ Ա. Մարտիրոսյանը և Բաֆֆին խոսել են Արծրունու մասին։ Առաջինը գրում է. «Հայոց գրականության և մատուցի մեջ տնտեսական բնդհանուր խնդիրների հարուցանողը յեղել է «Մշակը»։ Մինչև այդ լրագիրը հայոց մատուցի մեջ չկար տնտեսական խնդիր, ժողովրդական տնտեսական կյանքը»։ Ցեվ այս տողերը գրվում են Մի՛ք. Նալբանդյանի «Ներկրագործությունը իբրև ուղիղ ճանապարհ» տնտեսագիտական տրակտատը լույս տեսնելուց մի քանի տասնյակ տարիներ հետո։... Բաֆֆին գրում է Գ. Արծրունու «Այնտեղ և այստեղ» պատմվածքի մասին. «Մի գեղեցիկ պատկեր է Ռուսաստանի ուսանողների կյանքից»։ Նոսքի վարպետը հավանում է կուսակցի մի այնպիսի պատմվածքին, վորում ընդհանրապես կյանք և մասնավորապես ուսանողական կյանք չկա և վորն ունի լեզվի և նկարագրության մի անորինակ աղքատություն։ Մի յերկու նմուշ բերենք. «Մարմնի կազմվածը,—գրում է Արծրունին,—կոլա եր և անշնորհ։ Նա անշնորհի կերպով, կարծես թե փեսացած նռատ եր, կամ ավելի լավ է ասել՝ ցցված եր աթոռի ծայրին անշնորհի կերպով, յերկու անշուշտ գործիքների (?!) պես գցել եր իր ծնկների վրա իր յերկու բազուկները»։ Մի քանի տող ներքև. «Նա կրկին ժպտաց իր զվվելի և հիմարատ ժպիտով, անշնորհ կերպով սեղմեց ձեռքս և նույնքան անշնորհ քայլերով գուրս յեկավ սենյակից»։ Մի ուրիշ տեղ Գ. Արծրունին գրում է.

«Լիզավետա Իվանովնան գեղեցիկ չեր, բայց սիրուն եր», և այն և այն։

Այնուհետև Արծրունու արժանիքները թվելիս՝ ասել են, վոր նա մեզանում ստեղծել է հրապարակախոսական լեզու, առաջին խմբագիրն է յեղել, վոր իշխել է իր թերթի ուղղության վրա, ռուսահայի ամենամեծ յերգիծաբանն է և հանդիսացել Ասիացու ֆելիետոններով, հենց գրական ասպարեզ իջնելու որից նա գլխովին պատրաստված եր ղեկավար լինելու համար և, վերջապես, նրա լիբերալիզմը զուտ բուրժուական բնույթ չունի, այլ գերազանցորեն մանր բուրժուական թեքում՝ նարոդնիկական գունավորումով։

Արծրունու այդ բոլոր «արժանիքները» մեկ-մեկ գնահատելու կարիք չկա։ Մի-յերկու ըստ եյության առարկություն կուզեյինք անել։

Մեր լիբերալ գրական-քննադատությունը Արծրունուն իբրև հրապարակախոսի գերագնահատել է առանց հաշվի առնելու, վոր նա մեզանում վոչ միայն չարունակող և «Հյուսիսափայլ» գծի, այլ և իր տեսակով յերբե՛ք չի գերազանցում վոչ Նազարյանին, վոչ էլ Նալբանդյանին։ Ասել՝ թե Արծրունին հրապարակախոսական լեզու յե ստեղծել մեզանում, նշանակում է մոռանալ Նալբանդյանին, նույնիսկ Նազարյանին, վոր մի մարտիկ եր, պայքարող հրապարակախոս, և վոչ թե մի յերկչոտ կրոնամոլ, կամ, ինչպես ներկայացրել է նրան մեր լիբերալ քննադատությունը, «մեղմ ու հեզ, խաղաղություն և ընդհանուր համաձայնություն յերազող բարոգիչ»։ Ասել թե Ասիացին իր ֆելիետոններով ռուսահայերի ամենամեծ յերգիծաբանն է և հանդիսանում, նշանակում է մոռանալ Գամառ-Քաթիպային, վորի յերգիծաբանական գրիչը ավել է մի շարք մնայուն գործեր, իսկ Արծրունու յերկերը մոռացվել են կամ լույս տեսնելուն պես կամ մոռացել են շատ հազվագյուտ ընթերցողների հիշողության մեջ։ Գերագնահատված է նույնպես Արծրունու լեզուն, վոր մի արտակարգ բան է համարված։ Մինչդեռ այդ լեզուն շատ աղքատ եր, աղքատ վոչ միայն բառապաշարով, այլ կենդանի խոսուն դարձվածքներով։ Բաֆֆիի լեզվի հետ համեմատած՝ Արծրունու գրածները ոտար լեզվից թարգմանության տպավորություն են թողնում։ Մենք չենք վերցնում վիպասան Բաֆֆին, այլ այն Բաֆֆին, վոր լրագրական հոդվածներ եր գրում և Արծրունու սիրած նյութերը հեղեղում։ Անփառատ պնդումներ չանելու համար վերցնենք մի խնդիր, վորի մասին հոդվածներ են գրել Արծրունին և Բաֆֆին։ Դա կանանց հարցն է։ Բաֆֆին գրել է «Հայ կինը» ուսումնասիրությունը։ Արծրունու հոդվածների բեղումն ավինք քիչ վերով։

Համեմատելով Գ. Արծրունու և Բաֆֆիի հայացքները՝ նկատում ենք, վոր հիմնական գծերով նույնն են։ Սակայն հայացքների գրական մշակու-

մը Բաֆֆիի մոտ գերազանց է. Թողնենք մի կողմ մեր վիպասանի լեզուն, վոր այնքան սահուն և ներդաշնակ է. դրա հետ միասին Բաֆֆին ավելի մոտ է կյանքին և նրա ուսումնասիրության մեջ իրականության ավելի շունչ կա, ավելի հարազատ ենք զգում նրա նկարագիրն և բնական գտնում նրա յեզրակացությունները: Գ. Արծրունու լեզուն, թեպետ տեղ-տեղ կարոտ, բայց արհեստական է. դատողությունները չոր ու ցամաք, դրեթե անթռիչք և արձանագրական, թեև նրա մոտ ավելի հետևողականություն կա, քան Բաֆֆիի դատողությունների մեջ: Բացի կենսական շնչից, կամ հենց զուցե այդ պատճառով, Բաֆֆիի ուսումնասիրությունը կենդանություն է ստանում և նրանով, վոր գեղուն է ժողովրդական ոճերով, առածներով ու առակներով: Նրա գրական ոճը ոյժեղ ևս փայլել է սիրուն նմանություններով, բանաստեղծական համեմատություններով: Մի յերկու որինակ բերենք: Ընտանիքի փակ շրջանից հանկարծ դուրս յելնելը, առանց նախապատրաստության լայն աշխարհի մեջ ընկնելը՝ ըստ Բաֆֆիի, կնոջ բարոյականի համար յերբեմն դառնում է «ճակատագրական»: Բաֆֆին այդ բանի մասին գրում է այսպես.—«Միտսա հեշտ է լինում վորսալ այն թռչուններին, վոր յերկար ժամանակ վանդակի մեջ եյին պահվել»:

—Մայրը հետևում է աղջկան, վոր վերջինս «չփչանա»: Բաֆֆին այդ բանի մասին գրում է այսպես. «Ցամաք փայտը նեցուկ են ավել գայթ տալնկին, վոր չծռվի», և այլն:

Գալով Գ. Արծրունու աշխարհայացքի նարոդնիկական թեքումին՝ մենք պետք է ասենք հետևյալը: Նարոդնիկության հիմնական բովանդակության եյական ելեմենտները համարվում են նախ՝ կապիտալիզմը դատող սոցիալիստական յերազանքը, և յերկրորդ՝ ագրարային խնդրում հակակալմածատիրական, նույն իսկ հեղափոխական ծրագիրը: Գ. Արծրունին գլխից մինչև գարշապարը հակասոցիալիստ եր, և բացի այդ՝ հողային հարցը նա լուծում եր իբրև «չափավորության սուպեռ» կամ այլապես, ինչպես 1905 թվին այն լուծում եյին սոցիալիստ դեմոկրատները...

Այդ բոլորից հետո պարզ է մեր գրականության մեջ Արծրունու բռնած տեղը.—նա վորոշ տաղանդով ժողովրդականացրել է լիբերալիզմի գաղափարները և մեր մամուլի պատմության մեջ հանդիսացել իբրև լրագրի գերբ բարձրացնող հրապարակախոս: Նա գաղրյուն հրապարակախոս եր: Նրա կրքոտությունը, համառությունը վո՛չ «սահմանին» սահմանահատությունն եր, վոչ էլ նրա «մտածողությունը» մարմնական հիվանդություն: Սխալվում են Գ. Նիկողոսյանը (Մագդա Նեքսոն) և Շերբինաղաշեն Արծրունու հոգեբանության մի քանի գծերը նրա մարմնական արատներով բացատրելով...«Մարմնավոր դրությունը,—ասում է Շերբինաղաշեն իր մեմուարներում,—մանկությունից ազդելով նրա պսիխիկայի վրա, տարիների ընթացքում ծայր աստիճան սրել եր նրա անձնասիրությունը...»: Ապա յերկու եջ ներքևում գրում է. «...և յես կարծում եմ նրա գրիչը չեր ունենալ այն հզոր թափը, յեթե նրա հոգու մեջ չլիներ այդ մշտական մաղձը»: Սա Լոմբրոզոյի տեսության մի վարիացիան է և վոչ թե իրական Արծրունու՝ դասակարգային դեկավարի հոգեբանական նկարագիրը: Անձնասիրություն և մաղձ հայտնաբերել են մեր բոլոր հրապարակախոսները սկսած Նալբանդյանից, բայց վոչ մեկն էլ «մարմնական դրություն» (?!) չի ունեցել...

Ինչպես հայտնի յե Գ. Արծրունու կենսագրությունից, նա միշտ եր ցանկացել և մի ամսագիր ունենալ, հրատարակել այն «Մշակին» զուգընթաց: Այդ բանը նրան չհաջողվեց: Արևելահայ լիբերալիզմին այդ գաղափարը—լուրջ հասարակական ամսագրի հրատարակումը—հաջողվեց գլուխ բերել Ավետիք Արասխանյանի ձեռքով: Արասխանյանը ծագեց «Մշակի» ծոցից, բայց նրա դիծը չարունակվեց՝ այն խորացնելով թե գաղափարական առաջադիմության նկատառումով և թե իր դուռ «ամսագրական առաջադիմի» շնորհիվ: «Մշակի» դիծը հարազատորեն չարունակեցին Լեոն (Առաքել Բաբախանյան), Ե. Մարտիրոսյան, Ալ. Քալանթար, Հ. Առաքելյան, և այլք:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ.

1. «Հյուսիսափայլից» Արծրունու ստացած գրական ժառանգությունը ի՞նչ հասարակական պատճառներով է պայմանավորված:

2. Գիսարեվի և Արծրունու հասարակական և գրական հայացքների մեջ ի՞նչ նմանություններ եք տեսնում (այս հարցին պատասխանել գրավոր):

3. Կանանց հարցի դրությունով Արծրունին արդյոք դո՞ւրս է գալիս լիբերալիզմի պահանջների սահմաններից:

4. Հայ լիբերալիզմի ցարական որիենտացիայի սոցիալական հիմքերը:

5. Անդրիովկասի «տնտեսական բարգավաճումը» վո՞ր չափով եր պայմանավորում արևելահայ լիբերալիզմի «հիմնական պրոբլեմները»:

6. Մանր-բուրժուական ոպոզիցիան ի՞նչ գծգծումներ եր հայտնում Արծրունու լիբերալիզմի դեմ:

7. Հայրենասիրին գրականությունն ու ազգությունական կուսակցությունները թե՞նչ սոցիալական պատվեր են տալիս արծրունական լեբերատիզմից:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Գ. Արծրունի. «Աշխատությունները», հատ. Ա.
2. » » «Թյուրքաց հայերի տնտեսական դրությունը».
3. «Մշակը և հայ կինը» (հոդվածների ժողովածու), 1912 թ.
4. Ա. Ցերենյան. «Գ. Արծրունու և նրա 25 տարվա գրական գործունեության տարիքով» տեղեկ 32–72.
5. Ի. Մալումյան. «Մոգի մշակը», տեղեկ 67–83.
6. Հարց. «Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ», տեղեկ 77-122.
7. Աբասխանյան. «Գ. Արծրունի», «Մուրճ», 1892 թ. № 12, տեղեկ 1864–1865.
8. Ն. Պարոնյան. «Ազգային ջոջեր», տեղեկ 256–271.
9. Տ. Հովհաննիսյան. «Գ. Արծրունու աշխատությունները», հատ. Ա. «Մուրճ», 1904 թ. № 5, տեղեկ 147–153. Նույն աղբ., № 7, տեղեկ 104–115.
10. Բաֆֆի. «Հայ կինը և հայ տերությունը», տեղեկ 191–195.
11. Սարուխան. «Հայկական խնդիրը և ազգային ազատագրությունը Թյուրքիայում», տեղեկ 137-151.
12. М. Покровский. „Восточный вопрос" (տես «Ցարական Ռուսաստանի դիվանագիտությունն ու պատերազմները» ժողովածու, տեղեկ 230 – 302).

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ի կուրս № 3 առաջադրության մեջ («Մրրուհի Տյուսաբ») սպրանել են հետևյալ սխալները

Ցեղեռ	Տող	Տպված է	Պետք է լինի
8	19	Նկատելով ոտար	Նկատելով՝ ոտար
11	6	վիլչակից	վիճակից
15	7	կյանքը մի	կյանքը՝ մի
17	19	բուրժուազիան գլխի	բուրժուազիան՝ գլխի
17	28	դեղաթափ	դեղթափ
22	16	լենկնից	յերկնից
24	9	յ ե ր ու	յերկու
24	16	գշխուն	գշխոյն
25	34	վեպերի	վեպիկների
26	32	կ՝նազիս	կ՝նազիս
27	9	նվազում է	նվազում են

0

<< Ազգային գրադարան
NL0382002

65.168